

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում զրկում են միմիայն խմորագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմորագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէից)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպեկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսչութիւն. Բարձր Նիկոլայի յօդ-
ւածի տօնախմբութիւնը. Գիւղացիները և կառա-
վարական հաստատութիւնները. Ապակաւած
յրեր. Նամակ. Էլէկտրոն. Նամակ Մոսկովայից.
Նամակ Բազուից. Նամակ Ալաշտայից. Ներքին
խորհուրդ. Ս.ՐՏԱ.Բ.Ի.Ն. Տեսչութիւն. Միջազգային
կոնգրէս. Պարսկահայերի կեանքից. Արտաքին լու-
սիւր. — ՀՆՈՒԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՍՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երևանեան նահան-
գում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՆ ՆԻԿՈԼԱՅ ԹՕԲԵԼՄԱՆ ՏՈՒՆԱԽՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Հոկտեմբերի 1-ին, ինչպէս անցեալ անգամ հա-
ղորդեցինք, տօնակց բարձր Ա. Նիկոլայի ծառա-
յութեան յիշատակը:

Երկուշաբթի օր, առաւօտեան 10 ժամից, յօդ-
ւածի բնակարանը սկսեցին գալ քաղաքացիական
և զինուորական վարչութիւնների ներկայացուցիչ-
ները և նրա բաղնիսի ծանօթները, չորսուորու-
յուն համար Շատ հիմնարկութիւնների կողմից,
ինչպէս տեղական գիտական հիմնարկութիւննե-
րի, քաղաքի, աշխատանքային կողմից, ներկա-
յացան պատգամաւորութիւններ, արտասանվեցան
ճառեր և կարգաւորեցան ուղերձներ:

Շորհաւորութեան եկան և կառավարչապետ
գեներալ-ադիւտանտ Զերեմետով, ֆինանսների
մինիստր Վ.Էնկերգադով, որ Բազուից Բաթում
գնացիւ՝ կարճ ժամանակով Թիֆլիս իջաւ, և
ուրիշ պաշտօնական բարձրագույն անձինք:

Նոյն օրը, երեկոյեան, ի պատիւ յօդուածի
ճաշ արվեց Թիֆլիսի «Երեւոթովում», որը բաժանա-
րէից իր կերպով պատրաստված էր հանդիսի հա-
մար:

Ճաշին մասնակցում էին մօտ 150 հոգի, ի մի-
ջի այդց կողմից կառավարչապետ գեներալ

Զերեմետով, պետական խորհրդի անդամ և կողմակա-
ն ծանօթ գեներալ Սլեպետով-Միլերսկի, զարդ-
եցական չրվանի հոգաբարձու Եանովսկի, և զինու-
որական և քաղաքացիական վարչութեան ուրիշ
ներկայացուցիչներ:

Ճաշի սկզբին կողմակաՆ պ. կառավարչապետ
առաջարկեց Թագաւոր Կայսրի և Թագաւորական
Տան կենացը, որն ընդունվեց բարձրագույն ուղանե-
րով: Ապա բարձր Նիկոլայի առաջարկեց կողմակա-
նակին փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկո-
լայիչին կենացը, որն ընդունվեց ոգևորութեամբ:
Այդ կենացից յետոյ պ. կառավարչապետը առա-
ջարկեց խմել յօդուածի կենացը: Պ. կառավարչա-
պետի և ուրիշ մի քանի կենացները խմելուց յետոյ,
սկսվեցան ճառարկութիւններ, որոնց մէջ պարզա-
բանութեամբ և մասնամանկ էլին լինում բարձր Նիկոլայի
գործունէութեան այս կամ այն կողմերը: Ճառեր
խօսեցին պ. Կուրախով, իշխան Ճալալաբաձէ, գեմ-
նադկայի գերկտոր պ. Մարկով, գիւղատնտեսա-
կան ընկերութեան կողմից պ. Յ. Խաթիսով,
Թիֆլիսի քաղաքապետ պ. Մատիսով, պետական
բանկի բաժնի կառավարիչ Կայանով, նահանգա-
կան դատարանի նախագահ Բիկով:

Պ. բարձր ճառարկեց յետոյ խօսեց ինքն բարձր
Նիկոլայի, որի մէջ ասեց թէ իր պետական ծա-
ռայութեան մեծ մասը անց է կացրել կողմա-
կաՆ, և թէ շատ հրճուած է պատճառում իրան
այն հանգամանքը, որ այս ուրախութիւն օրը անց է
կացնում այստեղ իր ընկերների և նախկին պաշ-
տօնակիցների շրջանում: Շորհաւորութեան յայտ-
նելով ամենքին, բարձր առաջարկեց թանգագին
կողմակաՆ և Թիֆլիսի կենացը:

Ճաշը վերջացաւ ժամը 9-ին: Մի ժամանակ չափ
էլ մնացող ներկայ եղողներին շրջանում, — բա-
րձր Նիկոլայի ժամը 10-ին մեկնեցաւ «Երեւոթով»
շինութիւնից:

Դէպի որ կողմն է հոսում գետը: Թէ և գետը բա-
ւական լայն է, բայց կատարելապէս մոռնալայն
տեղը ունի ջուրը, շատ դանդաղ հոսելով և անց-
նելով ամայի, անաչի, տխուր ափերի մէջուղ:
Արաքսի ափերից մինչև Երեւոթ մնում էր մօտ 20
վերստ և այդ ամբողջ տարածութիւնը մենք ան-
ցանք, առանց մի որ և է դժուարութեան:
Ճանապարհը բաւական տաղաքակաՆ է. անապի-
տարածութեանը տափարակ երկրի՝ մասամբ
մշակված հողերով, մասամբ էլ կրային և արային
սարկուսի հող ունեցող ամայի դաշտերով, որոնց
վրա բուսումն է նոսր խոտ, — ներկայացնում է
ճանապարհորդի աչքերին մի անվերջանալի միա-
կերպութիւն: Միայն տեղ տեղ, օղորտների պէս,
երևում են հայ և թուրք գիւղեր, չըջապատված
արուեստական մերկերով: Ճանապարհի վրա իմ
տեսած բոլոր գիւղերի և նոյն իսկ Երեւոթի տները
ոճը նոյն է, ինչ որ ես տեսել էի Արաքսեան
դաշտի միւս կողմերում՝ Գառնի-Գասաբում, Է-
դի-Գասաբում և Գաւալու գիւղերում. դա հին բաբել-
ոնեան պատմական գիւղական տների ոճն է...

Ընդունելութիւնը Երեւոթում շատ սիրալիկ էր:
Ես այցելեցի գիւղի հայոց արական և իգական
դպրոցները շինութիւնները. ուսումը դեռ ես
սկսված էր: Ծանօթացայ գիւղի բնակիչներից
ամենանշանաւոր անձերի հետ, տեսնվեցայ դըւ-
րոցները ուսուցիչները և հոգաբարձուները հետ:
Նոյն իսկ մօտակայ Գիւլիջա գիւղի արքունի գիւ-
ղական դպրոցի ուսուցիչները պատիւ արեցին
այցելել ինձ: Այդ դպրոցը հիմնված է հայ մա-
նուկների համար, իսկ Արաքսի գիւղում հիմնված
է մի գիւղական արքունի ուսումնարան թուրք
մանուկներին համար, սակայն թուրքերը իրանց
մանուկներին չեն էլ ուղարկում ուսումնարան և
ուսումնարանը ընդամենն ունի մի 3 կամ 4
աշակերտ...

Ծանօթացայ և զաւառապետ փրոմանի
նրա ամուսնու հետ: Փրոմանի շատ սիրված է

ԳԻՒՂԱՅԻՆԵՐԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՁԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒ-
ԹԻՒՆՆԵՐԸ

Ով փոքր ի շատ է հետեւել է գիւղական կեան-
քին, և առհասարակ աղքատացեալութեան անգրա-
գէտ դասակարգին, նա շատ լաւ գիտէ, թէ ինչ
տանջանք է գիւղացու համար յարաբերութիւննե-
րի մէջ մտնել և գործ ունենալ կառավարչական
և դատաստանական հիմնարկութիւնների հետ:

Մի անգրագէտ գիւղացի, կամ անգրագէտ մի
արհեստաւոր, որ գրել չը գիտէ, որ անձնաթիւ է
զանազան ձևերին, որ տեղեակ չէ թէ ինչպէս
պէտք է տալ, — անտանելի դժուարութիւններ
հանդիպում և օրերով թու գալով այս և այն
պաշտօնական հիմնարկութեան առաջ, չէ իմա-
նում ինչ անի, որ իր խնդիրը տեղ հասնի:

Այս օրերս ներքին գործերի մինիստրութիւնը
մի կարգադրութիւն է արել, որով շատ հնչու-
թիւն կարող է պատճառել այն գիւղացիներին,
որոնք գործ ունեն պաշտօնական հաստատու-
թիւնների հետ: Նահանգապետներին և զանազան
գիւղական հաստատութիւններին ուղղած չըջա-
բերականներով, մինիստրութիւնը պարտաւորեց
նում է, որ բոլոր կառավարչական հաստատու-
թիւնները և գիւղատնտեսները ընդունեն գիւղացի-
նեց բերաւ աւելի և գրաւոր խնդիրներ՝ իրանց
իրաւասութեան վերաբերեալ գործերի համար
Թույլ տալ, որ գիւղացին բերանացի կերպով
յայտնէ իր ցաւը և խնդիրը. — ինքն ըստ ինքեան
կը նշանակէ մի մեծ թեթեւութիւն պատճառել
գիւղական դասակարգին:

Եթէ պատահի այնպիսի դէպք, որ խնդիրը
տրվում է մի այնպիսի հիմնարկութեան, որի ի-
րաւասութեան չէ ենթարկվում գործը, այդ հիմ-
նարկութիւնը պարտաւոր է յանձն առնել և իրն-
դիրը ուղարկել այնտեղ, ուր հարկն է, եթէ մի-

երկրում և բաւական հոգում է խղիւղի արտաքին
բարեկարգութեան մասին: Գիւղի մոտեցին դաւա-
ռապետի ջանքերով շինվել է մի բուլվար. արեւ-
վել են չորս շարք բարդի ծառեր, շինվել են
անցքեր, տեղ տեղ դրվել են նստարաններ:

Երեւոթում շատերի հետ խօսելով, իմացայ որ
այդ գիւղում տեղի են ունենում նոյն անախորժ
յարաբերութիւնները գիւղացիներին և կառուծա-
տէր բէկերի մէջ, որոնք տեղի են ունենում և
միւս հայաբնակ գիւղերում, օրինակ Գաւալու
գիւղում: Ձանապանութիւնը դրա մէջն է միայն,
որ գիւղացիներից հողերը խել ցանկացողները և
գիւղացիների դէմ դատ վարողները՝ ոչ թէ հայ
բէկերն են, այլ մահմետական կառուածատէր խա-
ները, որոնք նմանապէս կառուածատէր են հա-
մարվում այս կողմերում:

Այս, հայ գիւղացուց հողը խել ցանկացող կա-
ռուածատէրերը մահմետական բէկերն են այստեղ,
բայց ինչ որ աւելի ցաւալի է, այդ այն է, որ
կառուածատէրերի վատարանները, հայ գիւղացի-
ների դէմ թուրք խաների վարած դատի պաշտ-
պանները՝ հայ խնտիկներին պատկանող
բարձրագոյն ուսում ստացած աղօլօկաններն
են...

Մեր կը լինի որ մեր համալսարանականները
կը հասկանան բարձրագոյն ուսում ստացած
խնտիկներին լայն բարեբար դերի նշանակութիւնը
ժողովրդի մէջ...

Երեւոթից պատկերին ինձ մի հրապարակական
ճաշկերպութիւն: Արեւի եմ քաղաքում դէպքից թէ
իզգրքներին և թէ երևանցիներին, որոնք սեւ-
տեմերի 16-ին նոյնպէս հրապարակեցին ինձ հրա-
պարակական ճաշկերպութիւն, իմ խորին շորհա-
կարութիւնս յայտնելու նրանց հիւրասիրութեան
համար: Ուրախ եմ որ այդ ճաշկերպութիւնի ժա-
մանակ ես առիթ ունեցայ փոքրիկ առնարա-
նութիւնների մէջ արտայայտել իմ զաղապարները
երկրի այլ և այլ ցեղերի համեմատութեան ան-

այն խնդիրը այնքան պարզ է գրված, որ հաս-
կացվում է գործի էութիւնը: Այդ կանոնից բա-
ցառութիւն են կազմում այն բոլոր թղթերը, ո-
րոնք պատկանում են քաղաքացիական դատաս-
տանական գործերի տեսակին, այլ և քրէական
գործերի վերաբերեալ ապա և ցի օրէնի կոչված
զանգաւանները: Այդ տեսակի զանգաւանները, որոնք
տրվում են ոչ այն հիմնարկութիւններին, որոնց
հարկն է, կը վերադարձվեն խնդրատուներին,
մանրամասն կերպով բացատրելով, թէ ուր պէտք
է դիմեն նրանք: Անպատճառ հարկաւոր է, որ
մի գիւղացու, կամ ամբողջ գիւղական հասարա-
կութեան կողմից արվող ամեն մի խնդրի մէջ
նշանակված լինի խնդրի կազմողի անունը, կո-
չումը և բնակութեան տեղը:

Այդ մի քանի մանրամասնութիւններից արդէն
պարզ երևում է, որ եթէ մինիստրութեան չըջա-
բերականի մէջ եղած կարգադրութիւնները բարե-
խղճօրէն իրագործվեն զանազան հիմնարկութիւն-
ների պաշտօնական կողմից, այն ժամանակ
գիւղացիները շատ հնչուութեամբ կարող կը լինեն
դիմել զանազան կառավարչական հաստատու-
թիւններին, միշտ համոզված լինելով, որ այնտեղ
իրանց կը արվեն հարկաւոր խորհուրդները, թէ
այս ինչ գործի համար ուր պէտք է դիմել:

Դա մի լաւ միջոց է ժողովրդին ազատելու
այն խորամանկ աբլակա տնէրից և մի քա-
նէրից, որոնք աշխատում են համոզել միամիտ
գիւղացուն, թէ առանց իրանց միջամտութեան
և աջակցութեան, նրանք մի քաջ անգամ չեն
կարող անել:

ԱՊԱԿԱՆՎԱՍԹ ԶՐԵՐ

Պ. Գրիգոր Արծրունի «Երևանեան նահան-
գում» վերնագրով իր ճանապարհորդական նամակ-

հրապարակութեան մասին:

Այս օրերս ուղում եմ գնալ Աշտարակ և Արա-
րան, ապա յոյս ունեմ մուտնօրհութեան տօնին
Էջմիածին գնալ Թիֆլիս վերադառնալու ժամա-
նակը մօտենում է և ես աշխատում եմ տեսնել
Երևանում ինչ որ հետաքրքիր և տեսնելու արժա-
նի է: Այդպիսով նորերումս այցելեցի Երևանի
Գայեանեան օրիորդական հայոց դպրոցը:

Ներկայ գտնվեցայ դպրոցի մի քանի դասերին
(ուսանէին և հայերէն լեզուից): Առումնարանի
չէնքը, վարժուհիների դասատուութիւնը, երեւա-
նի պատմականները՝ լաւ տպավորութիւն գոր-
ծեցին ինձ վրա:

Շինութիւնը կառուցել էր իր հաշուով պ. Գե-
ւորդ Ղազարեանց: Սակայն հոգաբարձութիւնը,
իմ կարծիքով, բաւական խնամք չէ տանում շի-
նութեան մասին. տան դռնի պատը կատարելա-
պէս խնամ է: Պէտք է հոգային այդ պատը չո-
րացնելու մասին: Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու
դաւթում (որտեղ և գտնվում է Գայեանեան դըւ-
րոցը) դարձեալ կառուցվում է այժմ դպրոցի հա-
մար երկու ընդարձակ և լոյս սնեակներից բաղ-
կացած մի նոր լրացուցիչ շինութիւն:

Չարմանալի է երևանցիների տիպը: Այդ տիպը,
օրինակ, Գայեանեան դպրոցի աշակերտուհիների
մէջ ներկայացնում է ամեն տեսակ ցեղական տի-
պեր: Նայում էք փոքրիկ օրիորդների վրա, — և
տեսնում եք, որ նրանցից մէկը բուն արեւելցու
դէմք ունի, սեպեայ, երկայն թերթաւաններով,
օվալ դէմքով, միւսու, հաստ, կլոր, մօնղոլական
դէմքով, չէլ մաղերով և այլն... Մի խօսքով այլ
և այլ, կատարելապէս տարբեր տիպերի մի կար-
մանալի խառնուրդ:

Նոյնանման խառնուրդ նկատվում է քաղաքի
աղքատավորութեան մէջ: Գիւղերի, գոնէ Երևան
քաղաքին չըջալայ գիւղերի աղքատավորութեան
տիպը աւելի մաքուր է պահպանվել:

Գրիգոր Արծրունի

ների մէջ հաղորդում է հետեւեալ փաստը. «Շէնպալիք գիւղի բնակիչները հիւանդոտ, դեղ-նած դէմքեր ունենալ արդեօք տիրում է մշտական տենդը: Եւստ քաջատեղեկ, որ մշտական տենդի պատճառը՝ Երեւանից այդ ուղղութեամբ հոսող և գիւղի աղբիւրի հետ խառնվող բաղնիքների կեղ-տոտ ջուրն է, այդպիսով գիւղացիք, խմելով միշտ անմաքուր ջուր, հիւանդանում են տենդով, և նը-րանք, ի հարկէ, չեն էլ մտածում միջոցներ ձեռք առնել՝ Երեւանի հոսող անմաքուր ջուրը կտրել, ուրիշ կողմ դարձնել, որպէս զի չը խառնվի ի-րանց աղբիւրի հետ ու չապականի նրա մաքուր ջուրը»:

Այդ փաստը, որի վրա մասնաւոր է արված, բացառիկ փաստ չէ, այլ պոպուլյար մի երևոյթ է ոչ թէ Կովկասում, այլ ամբողջ Ռուսաստանում: Պատկերով դատաւանդում յաճախ կարելի է պա-տահել այնպիսի գիւղերի, որոնց բնակիչները միշտ ենթարկւում են զանազան հիւանդութիւնների, և եթէ հարցնել, հնչեց իրանք գիւղացիք կանեն, որ պատճառն այն է, որ խմում են ապականված ջուր: Հետաքրքրիկ է և կը տեսնէք, որ խկապէս գիւղի ջուրը հիւանդ է, մաքուր, առողջարար է ինքն ըստ ինքեան, բայց զանազան հանքերից հոսող ապականված ջրերը նրա հետ խառնվելով՝ ապա-կանում են այն ջուրը, որը միակն է գիւղի դո-րածութեան համար: Մի տեղ ջուրը ապականում են բաղնիքների կեղտոտութիւնները, միւս տեղ հանքահորերից հոսող առուակը, երրորդ տեղը դործարաններից դէն թափվող տականքները և այլն:

Իրանք գիւղացիք շատ անգամ չեն ուզում հա-կանալ, որ դրա առաջն առնել կարելի է, շատ անգամ էլ անդոր են զանազան փաշած ջրերի առաջն առնելու, որոնք դիտք գիւղից շատ վե-րև խառնվում և փայտանում են այն ջուրը, որը դործ են անում բնակիչները:

Հետևանքը այն է լինում, որ շատ տեղ գիւղա-ցիները միշտ ենթարկւում են զանազան հիւան-դութիւնների՝ գործածելով վատ ջրեր: Իսկ վատ ջուրը՝ հիւանդութիւններ տարածե-լու ամենալաւ միջոցներից մէկն է: Այդ գիւղե-ամեն ոք, առանց բժիշկ անգամ լինելու:

Այդ վնասակար, հակաառողջական երևոյթի վը-րա Պետերբուրգում ուղադրութիւն է դարձրած: Բժշկական վարչութեան կարողութեամբ, Կայս-րութեան շատ տեղերում սկսել են հետազոտել այն հարցը թէ ինչ ներգործութիւն են անում դործարանները և ուրիշ արդիւնաբերական հիւ-նարկութիւնները մօտիկ հոսող գետերի և գետակ-ների ջրերի վրա: Ինչպէս ասված է պաշտօնական բացատրութիւնների մէջ, այդ հետազոտութիւնը անվում է այն պատճառով, որ շատ դործարան-ներ մինչև այժմ էլ իրանց տ ա կ ա ն ջ ն ե ռ ո վ և բաց թողած կեղտոտ ջրերով թունաւորում են ջրերը, իսկ այդ ջրերը շատ վատ են աղբում տե-ղական աղբաբնակութեան առողջութեան վրա:

Կառավարութիւնը, հաւաքած տեղեկութիւնների հիման վրա, խիստ միջոցներ պէտք է դործ դնի այդ դործարանների և արդիւնաբերական հիւնարկու-թիւնների դէմ, որոնք անհոգ վարվելով, ոչինչ միջոցներ ձեռք չեն առնում, որպէս զի իրանց ապականված արտադրութիւններով չապա-կանեն խմելու ջուրը: Միանգամայն ցանկալի է, որ այդ խիստ միջոցները դործ դրվեն և Անդը-կովկասում, ուր զանազան քաղաքներում և տե-ղերում գոյութիւն ունեցող կաշուի դործարանները, պղնձի հանքերը, մետաքսի դործարանները և այլ ամեն տեսակ դործարաններն իրանց կեղ-տոտ արտադրութիւնները բաց թողնելով՝ փյա-ցում են գետերի ջրերը, և նպաստում զանազան հիւանդութիւններ տարածելուն:

Չը պէտք է մոռանալ, որ Շէն-գալիթի նման դժբաղդ գիւղեր, որի մասին վերև յիշված է, մեր գաւառներում շատ և շատ կան:

ՆԱՄԱԿ ԼԵՄԻԱՆՆԵՐ

Սեպտեմբերի 30-ին

Այսօր էջմիածնում, վանքի մէջ, վանքի շինու-թեան շուրջը, լճի ափերին, ձմարանի շինութեան կողմերում, և համարեա ամբողջ վաղարշապատում մի արտասովոր կենդանութիւն է տիրում: Վաղ առաւօտվանից արդէն ահագին բազմութիւնը որսի վրա էր: Անցնելով ահագին բազմութեան միջից, մարդ ախմայ կանգ է առնում, տեսնելով իր առաջ տարբորակ հագուստներով և միմիա-նից բոլորովին տարբեր մարդիկ և կանայք, որոնք

խմբվել են այստեղ աշխարհի բոլոր կողմերի՝ Հնդկաստանի, Թիւրքիայի, Եւրոպայի, Պարսկաս-տանի և Ռուսաստանի հայերից ներկայ լինելու հայոց եկեղեցու նշանաւոր ծիսակատարութեանը՝ մեծօրհնութեանը:

Նշանակը նպաստեց հանդիսի փառաւոր լինե-լուն: Կարգապահութեան համար տաճարի մօտ, և մի քանի ուրիշ տեղերում կանգնեցրած էին մեծ թուով զինուորներ և կազմակերպ: Առաջ-տեան 9 ժամին սկսվեց մի խաղաղօրէն զանգահարութիւն և վեհաժողովի սկսվեց հանդիսաւոր գնացքը դէպի տաճարը: Հանդիսին մասնակցում էր վանքի ամ-բողջ միաբանութիւնը: Առաջից գնում էին կա-թողիկոսի կարմրագլուխ շաթիւրները, ապա եր-գիչները, և դրանից յետոյ հազարականութիւնը, 12 զինուորաւորված եպիսկոպոսներ, որոնք տանում էին մեծօրհնութեան համար զանազան սրբա-զան անօթիներ և սրբութիւններ, և վեհապալա Մա-կար կաթողիկոսը, զգեստաւորված, ամպնովանու-տակ: Դրանց հետեւում էին զանազան բարձրադիր հիւրեր և բազմաթիւ ժողովուրդ:

Երբ հոգևորականութիւնը մտաւ տաճարը, եկե-ղեցու դռները սկսվեց մի անհերակայելի իրա-բանցում և շփոթ.—ամբողջ ուղում էր խռնվել տաճարը, զինուորները արգելում էին, իսկ ի-մերջոյ ստիպվեցան դռները փակել՝ երբ տա-ճարը արդէն լի էր ժողովուրդով: Ահագին թաղմու-թիւնը մեծ հետաքրքրութեամբ հետեւում էր մե-ծօրհնութեան դործողութեանը: Կաթողիկոսը, չըջապատված եպիսկոպոսներով, զլխաւոր սե-ղանի վրա կատարեց մեծօրհնութեան արարու-ղութիւնը:

Եկեղեցական ծիսակատարութիւնը վերջանալուց յետոյ, հանդիսաւոր գնացքը առաջվայ կարգով դարձաւ վեհարանը: Երկար ժամանակ վեհարանի պարտէզը և չըջապատվել լցված մեծում էր ահա-գին բազմութիւնը: Մինչև երեկոյ ահագին քանա-կութեամբ ժողովուրդը մտնում էր տաճարը, հաւ-բուրելու մեծօրհն կաթիւն: Միայն երեկոյան դէմ սկսեց մի փոքր աւելի հանգստութիւն տիրել: Մօտիկ տեղերից եկածները արդէն սկսում են վե-րադառնալ հնչեց այսօր: Մի քանի օր կը տևի, մինչև որ էջմիածնից կը հեռանայ հաւաքված բազմութիւնը: Շատերը կարծում են, որ այս տարի նախորդ տարիներից աւելի ժողովուրդ կար: Մի-այն Թիւրքիայից եկածները քիչ էին այս տարի:***

ՆԱՄԱԿ ՄՍԽԿԱՅԻՑ

Սեպտեմբերի 24-ին

Այս տարի համալսարանի իրաւաբանական բաժ-նի առաջին կուրսում 500-ից աւելի ուսանող կայ: Ուսանողների այդ մինչև այժմ չը տեսնված քանակութիւնը բացատրվում է նրանով, որ շա-տերը իրաւաբանական բաժնի վրա նայում են իր-ր ամենիցօրէն կայ արջկայ վրա, որի հետ ա-մուսնանալը շատ հեշտ է, որը կարող է սպասել մինչև որ փնտռեն ու կարգին աղջիկ գտնեն և ո-րի վրա միայն այն ժամանակը կը պատկերին, եթէ մինչև անգամ չլին էլ չը գտնեն: Ընտրում է մե-կը բժշկական մասը, տեսնում է՝ չէ, իր բանը չէ, թողնում է բժշկականութիւնը ու մտնում իրաւա-բանական մասը. կարծում է միւսը լեզուաբանա-կան բաժնի քննութեան ժամանակ, միակ փրկու-թիւնը իրաւաբանական մասն է: Աւելորդ է ասել, որ իրաւաբանական բաժնի բժշկականի հետ զը-բաւում է շատ ուսանողներ այն պատճառով, որ նիւթական կողմից իրաւաբանի ու բժշկի դրու-թիւնը լեզուաբանի ու քնադէտի դրութիւնից լաւ է ու ապագայում փայլուն կ'արի էր այն յոյս է տալիս: Բացի դրանից իրաւաբանական մասը մի հրապոյր էլ ունի, մասնաւոր ծոյլ երկտասարդնե-րի համար,—ամենահեշտ ֆակուլտետն է: Եւ ի-րաւ, իրաւաբանական ֆակուլտետը շատ հեշտ է եթէ աչքի առաջ ունենանք միայն դատաբանու-թիւնները և քննութեան ժամանակ պահանջվածը. բայց բարեխիղճ ուսանողի համար, որ հարկաւոր է համարում հիմնաւորապէս ուսումնասիրել իրա-ւաբանութիւնը, հասարակական գիտութիւնները,—այդպիսի ուսանողի համար իրաւաբանական բաժնից ամենադժուար մասնադիտութիւններից մէկն է: Բայց բարեխիղճներն պարագայ ուսանող-ներ, ամենաւաղ իրաւաբանական բաժնում, շատ քիչ կան: Լաւ ապացոյց դրան կարող է լինել այն, որ չը նայելով քննութեան ժամանակ եղած պահանջներին չափաւորութեանը (պրօֆէսորի դա-տաբանութիւնների իմաստը) մայիսին իրաւաբա-նական բաժնի առաջին կուրսի 400 ուսանողից

100-ից աւել կարվել են և մնացել նոյն կուրսում: Ուսանողների անսիրտ պարագայելը, ի հարկէ, մա-սամբ բացատրվում է այն պատճառով, որ—ուսա-նողները մեծ մասամբ անբարեխիղճ են վերաբեր-վում իրանց պարտականութեանը դէպի հասարա-կութիւնը: Նրանք մոռանում են, որ իրանց ծուլութիւնը տուժող վերջի վերջոյ հասարակու-թիւնը պէտք է լինի: Անբարեխիղճ է պարագայում բժիշկ-ուսանողը, կը նշանակի մի քանի տարուց յետոյ հարկաւոր հիւանդների պէտք է չտապեն վերջացնելու իրանց հաշիւները այս աշխարհի հետ, ոչինչ չէ սովորում իրաւաբան—ուսանողը, հետեւները այն կը լինի, որ հարկաւոր անմեղ մարդիկ ապագայում կը զրկվեն իրանց կայքերից կամ կը փտեն բանտերում ու Սիբիրում: Ինչո՞վ են մեղաւոր ապագայ կիւնեաներն ու պացիէնա-ները, որ այժմեան իրաւաբան ու բժիշկ ուսա-նողները ուղում են ուրախ ժամանակ անցկաց-նել, քէֆ քաշել: Ամօթ է...:

Օգոստոսի 2-ին հաստատված օրէնքը, որով իրաւունք է տրվում կին-բժիշկներին ամեն տեղ ազատ պրակտիկա ունենալ, մեծ ուրախու-թիւն պատճառեց ուսու հասարակութեան: Այդ յոյս է տալիս, որ շուտով կը բացվեն և կանանց բժշկական ու ուրիշ բարձր կուրսեր: Շատ օ-րերովնոր արդէն սկսել են պարագայել հին լեզու-ներով, որովհետև հաւանական է, որ նոր բաց-վելի կուրսերում ընդունվելու համար հին լեզուներ իմանալը պարտադիր լինի:

Տ. Յ.

ՆԱՄԱԿ ԲԱՅՈՒՆՑ

Սեպտեմբերի 28-ին

Ամսիս 11-ին, մեր բանաստեղծ Բաքոյէ Պատ-կանեան եկաւ Բագու և երէկ, ամսիս 27-ին, մեկ-նեցաւ այստեղից Էջմիածնի, մեծօրհնութեան հանդի-սակատարութեանը ներկայ լինելու: Պարոն Պատ-կանեանի այստեղ եղած ժամանակը հայ հասա-րակութիւնը սիրով հիւրասիրեց բանաստեղծին և ամսիս 20-ին, ամսաբային ակումբի դահլիճում, տուեց մի հացկերութիւն: Հալին ներկայ էին մօտա-ւորապէս 100 մարդ, որոնց թւում կային կանայք և օրիորդներ: Հաջ նշանակված էր ճիշդ ժամը 2-ին: Ինքն բանաստեղծը շուրջ բերեց 2 1/2 ժամին, որին դաշինճ մտնելու ժամանակ՝ դիմաւորեց հա-սարակութիւնը միաձայն «կեցցէ՛նք»-ով, որից յե-տոյ պ. Պատկանեան ցանկութիւն յայտնեց ան-ձամբ ծանօթանալ բոլոր հանդիսականների հետ, ուստի և ճաշի կարգադրիչները՝ պ. պ. բժիշկ Սա-չատուրեան, Հ. Ալիւաղան և Կրասնիկեան, ա-ռաջնորդելով բանաստեղծին, ծանօթացրին բոլոր հանդիսականներին հետ: Ժամը 3-ին նստեցին սե-ղան. կառավարիչ ընտրվեց պ. Ս. Բաղդիրեան: Հաջ ժամանակ, երբ առաջարկվեց յարգելի հիւ-րի կենացը, պ. սեղանապետը պարզ և սրտաբոլոր խօսքերով նորհաւորեց հիւրի գալուստը և ար-տայայտեց այն ուրախութիւնը, որ ունի հասա-րակութիւնը տեսնելով իր չըջանում պ. Պատկա-նեանին: Նոյն կենացի առիթով պ. Արապեանն կարգաց ի պատիւ Գամառ-Քաթիկային իր յօր-նած մի բանաստեղծութիւնը: Այս կենացին յա-ջորդեց հայ կնոջ և հայ մօր համար առաջարկված կենացը, որին պատասխանեց, ի դիմաց հայ կա-նանց Թ. Կանկանեան, ցոյց տալով Գամառ-Քա-թիկային բանաստեղծութիւնները իր թողական նը-շանակութիւնը մեր մասւրը և բարոյական վերա-ծնութեան գործում: Նոյն կենացի առիթով խօ-սեց և բժիշկ Արամեանց, սնդեղով նախորդ ատե-նաբանի խօսքերը և ասելով, թէ՛ բանաստեղծի գրուածքը պէտք է ամեն մի հայի սեղանի անհրա-ժեշտ զարդը կազմէ, և առաջարկեց ամենին պար-տաւորութիւն համարել Գամառ-Քաթիկայի գրուած-ներն ունենալ: Այդ երկու ատենաբանութիւննե-րին պ. Պատկանեան պատասխանեց, բանաստեղ-ծին անուով խորհմաստ խօսքերով և ի միջի այ-լոց ասեց, թէ Բագուի հայերի հասարակական գործերի մէջ ունեցած մասնակցութեան մասին շատ է լսել, իրաւունքեց հարուստներին հաւա-տարիմ լինել այդ լաւ սովորութեանը և միշտ ի նկատի ունենալ թէ, աշխարհի մէջ անջնջիկ և անմոռանալի են միայն այն գործերը, որոնք յօ-գուտ հասարակութեան են անվում:

Այդ միտքը հաստատելու համար, օրինակ բերեց, որ Բագուի պէս էին երբեմն հարուստ, բայց այժմ անյայտութեան մէջ կորած, Կալիպա և Նոր-Ջուղա քաղաքները, որոնք կորան իրանց հարստութեան հետ միասին, բայց այն երկու քաղաքները տո՛ճմից, որոնք իրանց ունեցած հար-

տութեան մի ամենաչնչին մասը միայն նուրբելով ազգին, իրանց անուանին անուանացրին և ազգի բարեբայի պանծալի անուն ժառանգեցին—այն է Նոր-Ջուղայից՝ Կաղարեանները—իսկ Կալիպայից՝ Ռաֆայէլեան: Վերջացնելով իր այդ խօսքերը, ա-ւելացրեց, թող բագուցիք աշխատեն դարգացնել իրանց օրիւնքները մէջ աշխատելու ընդունակու-թիւնը, իսկ աշխատանքի արդիւնքի մի մասը տան բարեգործական նպատակով այս կամ այն հիմնարկութեան: Այդ խօսքերը ծածկվեցան բուռն ծափահարութիւններով:

Մենք լսեցինք, որ երբ պ. Պատկանեան հիւ-րասիրված է եղել ճաշի մի մասնաւոր մարդու մօտ, երբ ի շարս այլ կենացներին, առաջարկվել է խմել այստեղի «Մարդասիրական ընկերութեան» յարատեւութեան կենացը, պ. Պատկանեան առա-ջարկել է, որ իր սեղանակիցներն իրան մեծարեկ նշանաւոր անեն որ և իցէ հասարակական նշա-նակութիւն ունեցող գործով և առաջարկել է ժողովարարութիւն անել «Մարդասիրական ընկե-րութեան» հիմնադիր լուսահոգի բժիշկ Ռուսո-մեանի կիսարձանը կառուցանելու համար: Այդ առաջարկութիւնը ընդունվել է համակրութեամբ և խկոյն ժողովվել է 150 բուլբուլ աւել:

Ամսիս 25-ին երգեցողութեան խմբակում Կար-Մուրզան, իր խմբի հետ միասին, մի համը-տուին, ի պատիւ պ. Պատկանեանի, որը շա-տա՞յդ անցաւ:

Թ. Կ.

ՆԱՄԱԿ ԱՂՍԱՖԱՅԻՑ

Սեպտեմբերի 30-ին

Վերջին շաբաթներում դէպի Էջմիածնի գնա-ցողների նշանաւոր բազմութեան պատճառով կա-յարանը մի տեսակ կենդանութիւն էր ստացել: Վաղօրեանից իջնելով այդ մարդիկ թափվում էին պոստի ստարոստայի գլխին, որն ինքն էլ չը դե-տէր, թէ իր 9 կառքի ձիաները ո՞ր մէկին տալ:

Մեծ մասը եկողներից ստիպված էր կայաքա-նում 6, 7 ժամ, նոյն իսկ մի օր մնալ, մինչև հերթը իրան կը գար. բայց բանը դրանում չէր, որ այս տեղից դուրս կը գային, սպասելու մի և նոյն վիճակին ենթարկվում էին նրանք նաև միւս կա-յարաններում:

Չը գիտեք, ընթերցող, պատահել է ձեռք, ար-դեօք, մեր տրակտով գնալ: Սպասում ես կայա-րանում 5, 6 ժամ, վերջապէս կառքը տալի են. դուք նստում էք, ամսական 6 բուլբի ստա-ցող մի գիւղացի նստում է կառապանի տեղ և կամաց-կամաց սկսում է քշել, յաճախ կանգ առ-նելով որ և պատճառով. վերջապէս հասնում էք կայարանը, և ահա «քիթ ու մուտք» կալ ստարոստան դուրս է գալիս ձեր առաջ. «ձի չկայ», ասում է նա և ձեռք դալին միւս կողմ:

Պէտք է նկատել, որ մեր կայարաններում չա-փից դուրս քիչ ձիաներ կան, համեմատած ավ-ընդարձակ երթևեկութեան հետ, որ կատարվում է այդ տրակտի վրայով: Այդ բանը առիթ է տա-լիս շատ նեղութիւնների, երբ որ և է պատճա-ռով գնացողների շատութիւն կայ:

Վերջին շաբաթներում շատերը գնացին Էջմիա-ծին դատարկ ֆուրգոններով, որոնք խոստանում էին ճանապարհորդներին 2 1/2 օրում Երեւան հա-ցնել: Նոյն իսկ շատ հարուստ մարդիկ ճանա-պարհներին սպասելուց ազատվելու համար, ճա-րահատված ֆուրգոններով էին գնում: Դիմադրի չէր, ի հարկէ, որ հարուստները ֆուրգոն էին նստում, ծիծաղելին այն էր, որ ֆուրգոնները կառքերի հետ մրցում էին:

Էջմիածնի գնացին, ի միջի այլոց, Հնդկաստա-նի Ջավա կղզուց եկած մի հարուստ հայ և իւ-մինիայից եկած մի հայ, որը այնտեղի պարո-մնտի անգամ էր: Նրանք ուղում էին վերադառ-նալ Աղստաֆայից, բոլորովին չը համաձայնեցող նստել պոստային սայլակի վրա:

Ամենից մաղաւու էր Թիֆլիսից եկող, հինգ հոգուց բաղկացած մի խումբ. նրանց բաղաժը 14 տկճոր (50 թունգի) զինի էր, որը նրանք տանում էին թէ ճանապարհին և թէ Էջմիածնում խնդու-համար:

Աբ. Ապ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պետերբուրգի աշխարհադրական ընկերութիւնը հարց է յարուցել ի պատիւ հանդուցեալ նշանա-ւոր ճանապարհորդ Պրոֆէսոր Կիսարեան կանգ-նեցնել ընկերութեան բնակարանի առջև:

Թիֆլիսի օպերային թատրոնի գործերը այս տարին անաշուղ են. մուտքը ընդհանրապես այնքան քիչ է, որ արտիստական ընկերությունները օպերային վերջը ահապին դեֆիցիտ կարող է ունենալ:

Մի ուշադրություն արժանի հարց պետք է լինի Պետերբուրգի նահանգի զենամասերի առաջին ժողովների ժամանակ. այն է ապահովության զենամասերի զարգացման այն վարժապետների և վարժուհիների գործունեությունը, որոնք կորցրել են իրանց առողջությունը: Առանց բացատրության էլ պարզ է, որ դա վերին աստիճանի համակրելի մի միտք է, և եթե իրագործվի, անկասկած, մեծ օգնություն կարող է ցույց տալ զորքերում գործող մարդկանց, թեկնացնելով նրանց վիճակը:

ՄՈՍԿՎԱՅԻ մեղ գրում են. «Անցեալ տարին արդէն հաղորդված էր ձեռք Մոսկովայի համալսարանի նախկին պրոֆէսոր Մակարով Կովալևսկու հոգով գրված մասին, որը վերաբերում է Կովկասին և որի մէջ հեղինակը մեծ համակրություն է ցուցնում հայերի մասին: Այժմ այդ գիրքը երկու հատորով արդէն լոյս է տեսել և կրում է «Здравое и обшчай на Кавказе» վերնագիրը: Երկու հատորի գինն է 4 ռուբլի»:

Թիֆլիսում ներկայացումներ տուող պ. Կրասնիկովսկու մոլորակական խումբը բաժանված հասարակություն է գրառում: Խմբի մէջ կան մի քանի լաւ ուղիք, ինքն պ. Կրասնիկովսկու, որ մոլորակական թատրոնական գործի գլխավոր աշխատակիցներից մէկն է, ոչ թէ միայն լաւ խաղում է, այլ և գրում է, և նրա գրած պիեսաներից շատերը խաղացվում են այժմ Թիֆլիսում:

Ռուսաց երեւելի բանաստեղծ Լ. Բ. Մ. Մ. Մ. մահվան 50-ամեայ տարեդարձը լրանալու առթիվ, Պետերբուրգում արդէն պատրաստվել են նաև տեսնում ձեռնարկելու նրա գրուածների էջանագին հրատարակությանը: Ինչպէս յայտնի է, հեղինակի մահվան 50 տարին լրանալուց յետոյ, հեղինակությունների սեփականատէրը կորցնում է նրանց վրա ունեցած իր իրաւունքը և վերջինս անցնում է արդէն հասարակության ձեռնարկեցնելին: Լեւոնտովի հեղինակությունների հրատարակության իրաւունքը ծախված էր յայտնի գրավաճառ Գալուստովի վրա: Ինչպէս մեղ հաղորդում են, Գալուստովները արդէն մեծ բանակություններով տպագրած ունեն բանաստեղծի գրուածները և նրա մահվան 50-ամեայ լրանալուն պէս ամենից առաջ կը տարածեն Լեւոնտովի հեղինակությունները էջանացրած դնով:

Այս վերջին մի քանի տարիները Ռուսաստանում սովորական է դարձել երեւելի հեղինակների գրուածները էջան հրատարակությունը: Ինչպէս յայտնի է, էջանացրած գներով հրատարակվեցան արդէն Պուշկինի, Ելիշինի, Ուսպենսկու, Տոլստոյի, Դոստոևսկու, Սկարինսկու և ուրիշների գրուածները: Այժմ մայրաքաղաքի լրագրիչների խմբում ենք, որ մտադրություն կայ էջանացրած գնով հրատարակել և յայտնի գրող Զլատովի գրուածները ամբողջ ժողովածուն: Քանի անգամ «Մշակի» մէջ առաջարկություններ եղան այդ միջոցին դիմել և մեր գրող Բաբիշին ամբողջ գրուածների վերաբերմամբ, — բայց այդ առաջարկությունները դեռ մինչև այժմ չլրացրած վիճակում:

ԳԱՆՁԱԿԻՑ մեղ գրում են. «Երեկ, սեպտեմբերի 30-ին, մեր նոր երգիչ պ. Ամիրջանեանց քաղաքի հասարակական դահլիճում մի կոնցերտ տուց: Դահլիճը լի էր հասարակությանը: Չը նայած, որ մեր ժողովարանի ցածր դահլիճը լրջով անյարմար է երեկոցույթի համար, այնու ամենայնիւ պ. Ամիրջանեանց այդ երեկոյ ամբողջ խմբում ունեցաւ նա ցոյց տուց, որ ունի բաժանան հարուստ բարիտոն: Հասարակությունը վարձատրում էր երիտասարդ երգչին ծափահարություններով»:

ԱՐԿԱԴԻՑ մեղ գրում են. «Բաժանված ժամանակ է, որ Արդուկունում տարածված է կոկորդի հիւանդությունը, որը մեծ դժգոհ է առաւել երեւելիներից: Օր չի լինի, որ 2—3 երեկոյ դո՛ւ չը դնայ այդ հիւանդությունը: Հիւանդությունը մինչև

հիմա չաբուժանվում է և դուրս երկար տեւի, եթե այս դժբաղդությունն առաջն առնելու համար միջոցներ գործ չը դրվեն: Արդուկին նման մի փոքրիկ քաղաքը այս ահապին կորուստը չէր ունենայ, եթէ հիւանդությունն նշանները երևալուն պէս, հսկելին և առաջն առնելին, որը շատ թեթեւ կերպով կարող էր իրագործվել, որովհետեւ հիւանդությունն հասարակ տեսակն է: Սակայն երեկոյների ծնողները կամ ազգականները լաւացնելու միջոցներ փնտռելու և բժշկի հրաւիրելու փոխաբէն, իրանք աւելի ծանրացնում են հիւանդի վիճակը, առաւել նրան մեծապար պտուղներ ուտելու: Ցաւալին այն է, որ մի քանի տեղեր, ուր երեկան կենցեղը յոյսը կարած և գերզմանի դրանք է մոտեցել՝ այն ժամանակ միայն հրաւիրում են քաղաքի բժշկին: Վերջինն էլ տեսնելով, որ մի օգնություն չէ կարող հասցնել, հեռանում է առելով, որ հիւանդությունը հասարակ է և անվտանգ: Ցանկալի էր, որ երբ մի երեկայի վրա հիւանդությունն նշաններ են երևում, ամենայն դեպքում բանեցնէին և շուտափոյթ բժշկի կանչէին, որը և կը լինէր գլխավոր միջոցը՝ այդ դժբաղդությունն առաջն առնելու համար»:

Անդ ուղարկված է Մոսկովայում գեղեցիկ կերպով տպագրված մի գրքից, «Գոթոր Զեններ» վերնագրով: Գիրքը հանրամատչելի կերպով խօսում է նշանաւոր Էդուարդ Զեններին մասին, որը յայտնի է իբրեւ ծաղկահատութեան, կամ ծաղկի պատուհանի հնարող: Ծաղկահատութեան միջոցով մարդկային ցեղը ազատվում է ահապին կորուսածներից, և արժէ, որ մարդիկ աւելի մօտիկ ճանաչէին այն անձնաւորութեանը, որը այդպիսի մի մեծ ծառայություն է մատուցել աշխարհին՝ իր տաղանդի շնորհով: Եւ ահա այդ նպատակն ունի այդ գրքից: Գրքից թարգմանողը մի կլին է, — Թիֆլիսի Մարգարիտ: Թարգմանութեան ընդուն պարզ է, բայց շատ տեղերում անհարթ է այն պատճառով, որ թարգմանողը ռուսերէն նախկին թիֆլիսցիները բառացի կերպով է թարգմանել:

Այս օրերս Թիֆլիս է եկել բանաստեղծ վարչություն գլխավոր կառավարիչ Գալին-Վրասկին: Հոկտեմբերի 2-ին նա այցելեց քաղաքացիների օրդոց ապաստարանը, որը գտնվում է Հաւաքաբունում: Նա այցելեց Թիֆլիսի բանտերը, որպէս զի ծանոթանայ նրանց ներքին դրութեան հետ:

Հոկտեմբերի 1-ին, ըստ սովորութեան, կատարվեց Մցխէթի տօնը, որը յայտնի է ժողովրդի մէջ «Մցխէթ-օբա» անունով: Այդ օրը Մցխէթ բաժանված մեծ բաղնիքներ են հաւաքել Թիֆլիսից և շրջակայ գիւղերից:

ԲԱՆՈՒՅԻ մեղ գրում են. «Սեպտեմբերի 29-ին բացվեց նախկին Կաթողիկոսների ժողովը: Նիստերին նախագահում էր պ. Շոթի, որ եկել է Պետերբուրգից: Կաթողիկոսը յետոյ մի ամիսի տեղեկություն հաղորդել ժողովի պարագայունքները արդիւնքի մասին»:

Հոկտեմբերի 2-ին տեղի ունեցաւ գեներալ Էյստենստ իշխան Վախտանգ Զաւարուկեան-Օրբելիանու թաղումը, հանդիսաւոր կերպով: Թաղման հանդիսին ներկայ էր պ. կառավարչապետը և ուրիշ բարձրաստիճան պաշտօնական անձինք: Հանդուգնաւ դադալի վրա դրված կային պսակներ: Նա թաղվեց Սիօնի մայր-եկեղեցում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԵՍ

Առաջիկայ հոկտեմբերին Անտիլոպեանում կայանալու է միջազգային կոնգրէս, որի ցարավածները գլխավոր առարկան պիտի լինի փոքրահասակ յանցաւորների և անտէր մնացած երեխաների դրութիւնը բարձրելու խնդրը:

Առանց բացատրութեան էլ հասկանալի է, որ այդ կոնգրէսի ուշադրութեան առարկան վերին աստիճանի համակրելի է մարդասէր է, և մենք քիչ ենք տեսնում այնպիսի կոնգրէսներ, որոնք զբաղվեն ըստ մարդասիրական խնդիրների, որոնց համար և սովորաբար գումարվում են եւրոպայում կոնգրէսներ:

Այդ կոնգրէսը պէտք է մշակի այն միջոցները, որոնցով հնարաւոր կը լինի խնամատարութեան

ներքոյ վերցնել անպիտան, և դէպի իրանց վաճառները վառ վերաբերվող ծնողներին որդեկանաց, խնամել անտէր, անօգնական մնացած երեխաներին, տեղաւորել զանազան բարեգործական հաստատութիւններին մէջ որբերին, անտէր մնալու պատճառով փչացած, անբարոյականացած փոքրահասակներին, փոքրիկ յանցաւորներին:

Գրա հետ միասին կոնգրէսի մէջ պէտք է որդեկան և այն միջոցները, որոնցով կարելի պիտի լինի ազատել փոքրահասակ երեխաներին զանազան վառ շրջաններից, շրջապատող անպիտան ընկերների ազդեցութիւնից, վառ խնամատարների ճնշումներից, — մի խօսքով այն բոլոր տարրերից, որոնք անբարոյականացնող կերպով են ազդում փոքրահասակների վրա, պատրաստելով այդ անխնամ մնացածներից հասարակութեան համար անպէտք անդամներ, անպիտան քաղաքացիներ: Այդ վերին աստիճանի մարդասէր նպատակը մեծ կարեւորութիւն ունի, մանաւանդ ներկայումս այն պատճառով, որ առհասարակ այժմ ամեն տեղ, գլխաւորապէս քաղաքային կենտրոններում, աղքատ ծնողներին որդեկան և որբ երեխաները այնպիսի անտանելի հանգամանքներով են շրջապատված, որ շատ հեշտութեամբ չեղվում են օրինաւոր ճանապարհից, դառնալով անբարոյական և մի և նոյն ժամանակ թշուառ մարդիկ:

ՊԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆ

Պարտականութեան Ատրուպատական նահանգի հիւսիսային կողմում Գարատաղ դաւառի հայաբնակ խնկէնի գիւղում պատահել է հետեւեալ եղեւնա-գործութիւնը, որի մասին գրում են արտասահմանի հայոց լրագրիչները:

Խնկէնի գիւղի Ամու անունով հայազգի Բեօլիսի աղջկը սիրահարուելով մի հարուստ հայ երիտասարդի վրա, ամեն կերպ խաղաղի միջոցներով համոզում է երիտասարդին որ իրան կնութեան առնէ: Երիտասարդը խոստանում է կատարել աղջկայ կամքը:

Բայց երբ այս գործը լսում են երիտասարդի ծնողքը, հակառակում են և համոզելով երիտասարդին մի ուրիշ աղջկայ վրա են նշանում:

Գործը այսպէս լինելուն համար Բեօլիսի գերդաստանը խիստ բարկանում է և սպասում է մի յարմար առթիւ որ վերջինս լինեն այն երիտասարդից:

Նշանադրութիւնից մի քանի օր յետոյ Բեօլիսի երկու որդեք դաշտում պատահելով երիտասարդին, բռնում են խեղճին և սկսում չարչարել: Մի հաստ փայտով սկսում են ծեծել և վիրաւորել և ուրիշ կերպերով խեղճին մարդկութենից զրկում, ներքին են անում, և այնպէս արիւնաթաթախ թողնում են դաշտում ուշաթափ ընկած:

Եղբուկները յայտնուած է Գալիլէի, առաջնորդին, որն և հարկէ պիտի աշխատի եղեւնա-գործներին պատժել տալ:

Մի քանի խօսք էլ ասեմ այդ դաւառի բոլոր հայաբնակ գիւղերի համար:

Գարատաղի 650—700 տուն հայ ընտանիքները (բացի Բեյլիսի) հիմա մի քանի տարի է որ վայելում են մի կերպ ներքին անկախութիւն:

Բայց ներկայ կացութիւնները դուշակում են որ այդ Հայերը կրկին անգամ պիտի ընկնեն Բեյլիսի պէկերի և խաների իշխանութեան տակ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Union Franco-Russe» լրագրի վիճկայի թղթակցի խօսքերով աւստրիական կառավարութեանը բողոքովին հաշտվել է իտալիայի երեքպետեան դաշնակցութիւնից դուրս գալու մտքի հետ: Մի քանի նշանակելի կարելի է ենթադրել, որ իտալիայի տեղը երեքպետութեան դաշնակցութեան մէջ կը բռնի Անգլիան:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում մի մասնաժողով է կազմել այն իրանդա-ցիներին օգնելու համար, որոնց կարտոֆիլի պակասութեան պատճառով սովի փոստից է ըստ պատճառ: Մասնաժողովին անդամներին թուում գտնվում են նախկին երկու նախագահները՝ Գեյս և Կլիվլենդ: Ամերիկական ժողովրդին ուղղված շնորհակալութիւնները մէջ մասնաժողովը խնդրում է իրանդա-ցիներին բոլոր բարեկամներից, առանց խտրութեան աղքի, կոմի, դաւանութեան և քաղաքական հայեացքների օգնութեան ձեռք մեկնել իրանդական գիւղացուն:

Սերբիայի ներքին գործերի մինիստրը պա-

հանջել է նախկին Միւսն թագաւորից, որ նա գրաւոր կերպով պարտաւորվի չը խառնվել սերբիական քաղաքականութեան մէջ:

Բէրլինից լրագրիչներին հեռագրում են, որ կենտրոնի կուսակցութիւնը սկսում է եռանդոտ կերպով գործել: Ընդհանուր ուշադրութիւնը գրաւեցին այդ կուսակցութեան մէկ անդամի՝ Ֆուկսի խօսքերը, որը կաթողիկոսների ժողովում կէօջում ասեց. «Մենք բոլորս եղբիւրներ ենք, մենք ապրում ենք և կը մեռանք նրանց հետ միասին»: Եղբիւրներին աքսորելու վերաբերեալ օրէնքը չնջելու օգտին եղած աղիտացիան գործադրում է:

Համբուրգում, Շտուտգարտում, Կէնիգսբերգում և Գերմանիայի շատ ուրիշ քաղաքներում սօցիալիստները տօնեցին հոկտեմբերի 1-ը, բայց ոչ մի տեղ անկարկութիւններ չեղան և աքսորված սօցիալիստների վերադարձը առանց արմկալի ցոյցերի կատարվեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 1 հոկտեմբերի: Պետական խորհրդի անդամ Բարոն Նիկոլային այսօր, նրա ծառայութեան 50-ամեակի օրը, շնորհված է Բարձրագոյն հրովարտակի հետ միասին Ս. Անդրէյ Նախալոցի աղամանեղայ չքանանը: Երէկ Պետերբուրգ վերադարձան ներքին գործերի և հաղորդակցութեան ճանապարհների մինիստրները: — «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Նովոգորոլի նահանգի տնայնագործները հիմնում են Պետերբուրգում իրանց արդիւնաբերութիւնների վաճառանոց: Նոյն լրագրի խօսքերին նայելով, հաստատված է բժիշկների փոխադարձ օգնութեան ընկերութեան կանոնադրութիւնը: Հիմնադրական վճարն է 5 ռ. անդամակցական 3 ռ. ընկերութիւնը կարող է հիմնել ճիւղեր պետութեան բոլոր քաղաքներում, ներքին գործերի մինիստրութեան սկզբնական թոյլտուութեամբ:

ԷՄՄԻՍԻՆ, 1 հոկտեմբերի: Երէկ ամենայն հայոց կաթողիկոսը կատարեց մեծաւոր՝ Սեփուհեան հանդէսը, որին ներկայ լինելու համար եկել էին մի քանի հազար հայեր Ռուսաստանից, Թիւրքիայից, Աւստրիայից, Բուլղարիայից, Բալթիկայից և Հնդկաստանից:

ՍՈՑԻԱԼ, 1 հոկտեմբերի: Ստամբուլով ծանր հիւանդացաւ նրա բժիշկը, մինչև ժողովի բացման օրը, հոկտեմբերի 1-ը, բժիշկները համարում են անկարելի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի: «Тражданин» լրագիրը ասում է, որ քաղաքային ըէֆօրմների նախագծի քննութիւնը պետական խորհրդում ղեկավար թէ կայանայ նաուաշինի երկրորդ կէսից առաջ, յունվարից յետոյ:

ՎԱՐՇԱՎԱ, 2 հոկտեմբերի: Երէկ այստեղ հասան Նոյս կայսերական Մեծութիւնները, Օգոստոսափառ Ընտանիքով: Արքայական դնացը կանգ առաւ պալատի մօտ, ուր և Նոյս Մեծութիւններին զիմաւորեցին իշխանութեան ներկայացուցիչները և Նորայ Մեծութեան ուղանքի գնդի պատաւար պահակը, մի փոքր կանգ առնելուց յետոյ, արքայական դնացը մեկնեցաւ՝ ուղեկցվելով ազգային օրհներգի նուագածութեամբ:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 2 հոկտեմբերի: Այստեղ հասաւ գեներալ-ֆէլդցեյխմայստր Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայից:

ԿՍԱՐՐՈ, 2 հոկտեմբերի: Այստեղ հասան, «Բոկանա» նաւով, Գեօրգի Մակիմիլիանովիչ Լէյտնանթ-գեներալը, որ ամուսնու հետ և իսկոյն ճանապարհ ընկան դէպի Ցեթինիէ:

ՍՈՑԻԱԼ, 2 հոկտեմբերի: Կառավարութիւնը մի-նօգի ժողով գումարեց, Բուլղոկի միտրոպոլիտի նախագահութեամբ: Ստամբուլով դեռ ևս հիւանդ է:

ՀԱՂԱ, 2 հոկտեմբերի: Պաշտօնապէս յայտարարված է, որ թագաւորը այլ ևս անկարող է զբաղվել լուրջ գործերով:

ԲԻՍՐԻՑ, 2 հոկտեմբերի: Այսօր Մեծ իշխան Միխայիլ Միխայիլովիչ, քաղաքային ինքնավարութեան անդամներին և այստեղ գտնվող բոլոր ռուսների ներկայութեամբ, տեղի ունեցաւ ռուսաց եկեղեցու հիմնադրութիւնը: Քաղաքը դարձրված է զբօսային կենտրոն, և երեկոյան ճրագալոյց կը լինի քաղաքային վարչութեան հաւաք:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 հոկտեմբերի: Երէկ Նոյս կայսերական Մեծութիւնները Օգոստոսափառ Ընտանիքի հետ միասին ժամանեցին Գատչինա:

Типографія Канцеляріи Главнанач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 228.